<<ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ԾՐԱԳՐԻ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ- 01, ԽՈՒՄԲ -06, ԴԱՍ-01) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ք.Երևան «____» _____ 2015թ.

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Գրիգորյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Նախարարություն), մի կողմից և «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս գործադիր տնօրեն Մ. Գրիգորյանի, որը գործում է Կազմակերպություն կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համաձայն «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշման, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կազմակերպությունը պարտավորվում է «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» ծրագրի իրականացման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ) կատարել սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Նախարարությունը պարտավորվում է Աշխատանքների իրականացման համար Կազմակերպությանը տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պետության կողմից սուբսիդիայի հատկացման ձևով ֆինանսական աջակցություն,

1.2 Կազմակերպությունը պարտավոր է Աշխատանքներն իրականացնելիս ստացված և գաղտնի ճանաչված տեղեկություններն օգտագործել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

1.3 Աշխատանքներն իրականացվում է Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N1-ին և Հավելված N2-ին համապատասխան:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. Օգտագործել Աշխատանքների արդյունքները,

2.1.2. Կազմակերպությունից պահանջել ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ հավելված N1-ում նշված բովանդակության համապատասխան,

2.1.3. Կազմակերպությունից պարբերաբար պահանջել և ստանալ տեղեկատվություն սույն Պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.4. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կազմակերպության կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները,

2.1.5. Վերահսկել Կազմակերպությանն հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը,

2.1.6. Կազմակերպությունից պահանջել Աշխատանքները կատարել սույն պայմանագրի 4-րդ կետում նշված ժամկետում:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1. Իր և Կազմակերպության կանոնադրություններով սահմանված կարգով, ձևով ու չափերով Կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.3 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրի շրջանակներում ստացված ֆինանսական աջակցությունն օգտագործել միայն Աշխատանքների իրականացման համար,

2.3.2. Նախարարության հետ համաձայնեցնել երրորդ անձանց պատկանող մտավոր գործունեության պահպանվող արդյունքների օգտագործման, դրանց օգտագործման համար իրավունքների ձեռք բերման անհրաժեշտությունը.

2.3.3. Իր ուժերով և իր հաշվին վերացնել Աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տված այն թերությունները, որոնք կարող են հանգեցնել ծրագրով նախատեսված միջոցառումներից շեղումների,

2.3.4. Նախարարությանն անհապաղ տեղեկացնել Աշխատանքների սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ Աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին,

2.3.5. Նախարարությանը հանձնել Աշխատանքների արդյունքները՝ չխախտելով այլ անձանց իրավունքները,

2.3.6. ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով Նախարարություն ներկայացնել ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ և տեղեկատվություն Պայմանագրի կատարման ընթացքի մասին:

3. Ֆինանսական աջակցության չափը և կարգը

3.1. Կազմակերպության Աշխատանքների իրականացման ֆինանսական աջակցությունն ըստ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և Պայմանագրին կից նախահաշվի կազմում է ընդամենը 90.346.500 (իննսուն միլիոն երեք հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

3.2. Ելնելով ՀՀ և ԼՂՀ տարածքների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի սեյսմիկ պաշտպանության թվով չորս պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված սուբսիդիայի չափաքանակների համադրումից՝ ՀՀ և ԼՂՀ տարածքներում սեյսմիկ ռիսկի կանխատեսման, գնահատման և նվազեցման աշխատանքների համար 1 միավորի գին է սահմանվում 25111.0 դրամ/քկմ (քսանհինգ հազար հարյուր տասնմեկ դրամ)

858807.0 հազար դրամ / 34200 քկմ = 25111.0 դրամ/քկմ

3.3. Կազմակերպության կողմից Աշխատանքներն իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումներն իրականացվում են ամսական՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա առաջին տաս աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ 2015 թվական հունվար և դեկտեմբեր ամիսների՝ հատկացվելիք գումարը տրամադրվում է համապատասխանաբար փետրվարի առաջին տաս աշխատանքային օրվա և մինչև դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, տարածվում է 2015թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, գործում է մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը:

5. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

5.1. Աշխատանքների իրականացման ընթացիկ և վերջնական արդյունքները Կազմակերպության կողմից հանձնվում և Նախարարության կողմից ընդունվում են Կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացության հիման վրա:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

8.1. Կազմակերպությունն իրավունք չունի առանց Նախարարության գրավոր համաձայնության այլ Կազմակերպություններին, հիմնարկներին և երրորդ անձանց հանձնել Պայմանագրի շրջանակներում կատարված Աշխատանքների արդյունքները:

8.2. Աշխատանքների կատարմանը երրորդ անձինք կարող են ներգրավվել միայն Նախարարության համաձայնությամբ:

8.3. Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ գործողության դադարեցումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.4. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասցեն՝ ք.Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, Անաստաս Միկոյանի փողոց 109/8

Հ/հ 900011001311
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02570338

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ

_____ **Ա. Գրիգորյան**

«Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան 2-րդ փակուղի N11

Հ/Հ 22301006824300
«Արցախբանկ» ՓԲԸ Տիգրանակերտի մ/ճ
ՀՎՀՀ 90010687

Գործադիր տնօրեն

_____ **Մ. Գրիգորյան**

'Հաստատում եմ"
ՀՀ տարածքային կառավարման և
արտակարգ իրավիճակների
նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
_____________ Ա. [illegible]
"___" ___________ 2015թ.

"Սեյսմիկ պաշտպանության Արևելյան ծառայություն" ՊՈԱԿ-ի 2015թ.
պահպանման ծախսերի նախահաշիվը ըստ հոդվածների

h/h	Անվանումները	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	տարեկան
1	2	3	4	5	6
1	Աշխատավարձ	15203,3	34207,4	53211,5	76016,5
2	Էներգետիկ ծառայություններ	440,0	990,0	1540,0	2200,0
3	Կոմունալ ծախսեր	44,0	99,0	154,0	220,0
4	Կապի ծառայություններ	220,0	495,0	770,0	1100,0
5	Գործուղումներ	180,0	405,0	630,0	900,0
6	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	200,0	450,0	700,0	1000,0
7	Տնտեսական ապրանքներ	200,0	450,0	700,0	1000,0
8	Տրանսպորտային նյութեր և ծախսեր	520,0	1170,0	1820,0	2600,0
9	Ընթացիկ նորոգման ծախսեր	200,0	450,0	700,0	1000,0
10	Պայմանագրային ծառայություններ	400,0	900,0	1400,0	2000,0
11	Գազի ծառայություն և ջեռուցում	120,0	270,0	420,0	600,0
12	Հարկեր, պարտադիր վճարներ, տույժեր	2,0	4,5	7,0	10,0
13	Համակարգչային սարքավորումներ, նյութեր	140,0	315,0	490,0	700,0
14	Այլ ծախսեր	200,0	450,0	700,0	1000,0
	Ընդամենը	**18069,3**	**40655,9**	**63242,5**	**90346,5**

"ՍՊԱրԾ" ՊՈԱԿ-ի տնօրեն Ծ. Գրիգորյան

Գլխ. հաշվապահ՝ Ն. Մովսեսյան

Հավելված N 1

N պայմանագիր

_____ հունվար 2015թ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ

_____ Մ. Գրիգորյան

_____ _____ 2015թ.

ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից, պայմանագրի շրջանակներում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի կանխատեսման, գնահատման և նվազեցման նպատակով իրականացվող աշխատանքների քանակական ցուցանիշերը

N	**Մատուցվող ծառայությունը**	Ցուցանիշը
1	Երկրաֆիզիկական, երկրադինամիկական և այլ դաշտերի մոնիտորինգ, սեյսմիկ վտանգի, այդ թվում ընթացիկ սեյսմիկ վտանգի, գնահատում(դիտարկումների թիվը)	**46000**
2	Սեյսմիկ ռիսկի ու դրա բաղադրիչների գնահատման համար տվյալների թվային բազաների ստեղծում, գնահատում, քարտեզագրում և ռիսկի նվազեցման առաջարկների ներկայացում (բնակավայրերի կամ օբյեկտների թիվը)	-
3	Գրունտների ուժեղ շարժումների մոնիտորինգ(կայանների թիվը)	**2**
4	Սեյսմիկ պաշտպանության տարրերի և վարքականոնների ուսուցանում, ՏԻՄ-երի աշխատողների նախապատրաստում(միջոցառումների թիվը)	**40**
5	Հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքում, թվային բազաների ստեղծում և դրանց սեյսմիկ խոցելիության գնահատում (օբյեկտների թիվը)	**120**
6	Ընդհանուր նշանակության օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքում, թվային բազաների ստեղծում և դրանց սեյսմիկ խոցելիության գնահատում (օբյեկտների թիվը)	**52**

Գործադիր տնօրեն **Մ. Գրիգորյան**